«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Հեքիաթների դերը, դաստիարակչական նշանակությունը տարրական դասարաններում
Առարկա - Մայրենի
Հեղինակ ՝ Սուսաննա Կարապետյան
Մարզ-Արագածոտն
Ուսումնական հաստատություն-Մելիքգյուղի միջնակարգ դպրոց

Ապարան 2022

Բովանդակություն

1. Ներածություն - - -

Ներածություն

Հեքիաթն այնպիսի հայելի է, որի մեջ ամեն մեկն իր պատկերն է տեսնում

Հեքիաթը ժողովրդավարական բանահյուսության ամենատարածված և ամենահին ստեղծագործություններից է, ծագել է մարդկության մանկության շրջանում: Այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել մարդկանց իրենց ամբողջականությամբ բարությամբ և լավատեսությամբ:

Մայրենիի դասաժամերին հեքիաթի ուսումնասիրությունը նպաստում է դպրոցականի մտածողության զարգացմանը օգնում է նրան հասկանալ կյանքի շատ երևույթներ,վերլուծելու հերոսների գործողությունները և քայլերը, հասկանալու գեղեցիկը, բարին, ազնիվը:

Ըստ առարկայական չափորոշիչի՝ մայրենիի ծրագրով հեքիաթի ուսումնասիրման վրա որոշակի պահանջներ են դրված՝ հեքիաթի խոր և բազմակողմանի ուսումնասիրության, ստեղծագործական կարողությունների զարգացման և ձևավորման համար:

Հետազոտության արդիականությունը

Հեքիաթը դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտի արժեհամակարգի ձևավորման գործում: Մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ նոր մեթոդներով ուսումնասիրման շնորհիվ աշակերտը յուրացնում է աշակերտների դաստիարակչական, ճանաչողական, ուսուցողական նշանակությունը, սա զարգացնում է նրանց երևակայությունը և ձևավորում է ստեղծագործական կարողություններ:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակը աշակերտների դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա հեքիաթների ներգործության բացահայտումն է: Աշխատանքը նպատակ ունի տարրական դասարաններում հեքիաթի վրա աշխատելու մեթոդական մոտեցումների, հեքիաթաստեղծման ձևավորմանը նպաստող քայլաշարերի համակարգման:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն
2. Հիմնավորել հեքիաթների բացառիկ նշանակությունը դպրոցականների անհատականության ձևավորման գործում
3. Նշել հեքիաթների անմիջական ազդեցությունը, աշակերտների երևակայության զարգացման և ստեղծագործական կարողությունների ձևավորման վրա
4. Կատարել հեքիաթաստեղծման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ և ստուգել նրանց արդյունավետությունը
5. Նշել տարրական դասարաններում հեքիաթի վրա կատարվող աշխատանքներ և ստուգել դրանց արդյունավետությունը

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը մայրենիի դասապրոցեսն է, տարրական դպրոցում տեքստի վրա աշխատելու կարողության ձևավորումը:

Հետազոտության առարկան

Մայրենիի դասագրքերում եղած հեքիաթների միջոցով դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման մեթոդական համալիրն է: Ընտրել հեքիաթի վրա աշխատելու ամենաարդյունավետ պատմելու տեխնիկան և մեթոդները:

Հետազոտության տեսական նշանակությունը

Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, կիրառված մեթոդները, վերլուծությունները լրացնում են դպրոցականների գիտելիքները հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման թեմայի շրջանակներում:

Հեքիաթը իբրև ժողովրդական բանահյուսության ժանր

<u>Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները</u>. Հեքիաթները ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում, երբ մարդն իվիճակի չէր թափանցելու շրջապատի բնական ու հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց մեջ եղած պատճառահետևանքային կապերը:Այս շրջանում գիտության անբավարար զարգացվածության աստիճանը մարդուն չի տվել այլ ճանապարհով իր երազանքներն իրականություն դարձնելու հնարավորություն և նա իր երազանքներին երևակայական լուծում է

տվել: Հենց դրա հետևանքով էլ հեքիաթները շատ պարզ, դյուրահաս ու հաճելի են երեխաների համար, նրանք ոչ միայն սիրով լսում ու կարդում են դրանք, այլև՝ կրկնակի ու եռակի անգամ վերընթերցում: Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Ստեփան Զորյանը և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված: Սա ևս ժանրային առանձնահատկություն է: Հավանաբար չկա մարդ, որ չի լսել հեքիաթներ կամ մանկության տարիներին հրապուրված չի եղել դրանցով:

Հեքիաթները բարի ու դրական ավարտ ունեցող իրական ու երևակայական բնույթի պատմություններ են, որտեղ արտահայտված են մարդկանց երազանքները և ազնիվ ցանկությունները:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացված են իբրև քարոզ, այլև արտահայտված են հերոսների արարքներով և խոսքերով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է ազդեցությունը, որը հեքիաթը թողնում է երեխայի զգացմունքների և համոզմունքների վրա: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է: Հեքիաթը, որպես գրական ժանրի առանձին տեսակ, ունի գեղարվեստական բնորոշ առանձնահատկություններ: Այն հարուստ է ժողովրդական արտահայտություններով, դարձվածքներով, չափազանցություններով, իմաստալից խոսքերով:

Հեքիաթին բնորոշ է հատուկ սկիզբը՝ «Լինում է, չի լինում», «Կար-չկար», «Ժուկով, ժամանակով» և հատուկ վերջը՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Չարն այնտեղ, բարին՝այստեղ»:

Բանահյուսության բոլոր ժանրերի, այդ թվում հեքիաթների ստեղծողն ու պահողը ժողովուրդն է: Հեքիաթներն իրենց մարդասիրական և հերոսական ոգով գրավում են բոլոր տարիքի ընթերցողներին, առավել ևս մանուկներին: Հեքիաթների մեծ մասը արձակ է, բայց պատահում են նաև չափածո հեքիաթներ, ինչպես օրինակ՝ Հովհաննես Թումանյանի «Հազարան բլբուլը», «Գառնիկ ախպերը»:

Հեքիաթները պատմվում են փոխանցվելով բերնից բերան, մի ժողովրդից՝ մյուսին: Հեքիաթում մարդը իր երևակայությամբ հաղթում է ժամանակին և տարածությանը: Ժամանակը հեքիաթում կարող է կանգնել կամ թռչել տիեզերական արագությամբ: Հեքիաթի որոշ հերոսներ ապրում են շատ երկար, նրանք կարող են մնալ միշտ երիտասարդ, չմեռնել: Նրանք չեն տգեղանում կամ գեղեցկանում:
Հեքիաթը պետք է անպայման ավարտվի բարի ուժերի հաղթանակով: Բարու հաղթանակը սովորաբար հեշտ չի տրվում: Հերոսները անցնում են մի շարք դժվարին փորձությունների միջով, հաղթահարում անհաղթահարելի թվացող արգելքներ և ամենակարևորը՝ բարին միայնակ չի գործում, նրան օգնում են հրաշագործները:
Ժողովրդական հեքիաթի հանդեպ անսահման սեր է ունեցել Հովհաննես Թումանյանը:
Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական, իրապատում և հրաշապատում: Տարրական դասարաններում հանձնարարելի են համարվում բուսակենդանական և իրապատում հեքիաթները միան, հրաշապատում հեքիաթները, որպես կանոն, այդ տարիքի երեխաներին խորհուրդ չի տրվում կարդալ:
<u>Բուսակենդանական</u> հեքիաթները առաջացել են հնադարում, թերևս այն ժամանակներում, երբ մարդը նոր էր սկսում ընտելացնել կենդանիներին: Այս հեքիաթների գործող կերպարները հիմնականում կենդանիներ են: Այս տեսակի հեքիաթների բնորոշ գծերից է կենդանիների և բույսերի անձնավորումը: Հիմնական հերոսներից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով: Օրինակ՝ աղվեսը խորամանկ է, գայլը՝ ագահ, կրիան՝ դանդաղաշարժ, նապաստակը՝ վախկոտ:
Տարրական դասարաններում ուսումնասիրվող կենդանական հեքիաթներից են «Ուլիկը», «Ճամփորդները» (Հովհ. Թումանյան):

<u>Իրապատում</u> հեքիաթները ըստ թեմատիկայի լինում են կենցաղային, սոցիալական, հերոսական և այն: Այս բոլոր հեքիաթների հիմքում ընկած է մարդկային կյանքը, իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով: Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված: Սա ևս ժանրային առանձնահատկություններից մեկն է: Դասավանդման ընթացքում

հեքիաթի ուսումնասիրությունն այնպես պետք է տանել, որ դրանք, թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛ առանձին-առանձին հասնեն երեխայի գիտակցությանը:

Հրաշապատում կամ կախարդական հեքիաթները վառ երևակայության, հոգիների, կախարդական աշխարհի, գերբնական երևույթների հետ կապված պատմություններ են, որտեղ հեքիաթի հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգն ու գավազանը, ցախավելը, չար կախարդներն ու բարի փերիները: Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի ու բարու պայքարը, որը ավարտվում է բարու հաղթանակով:

Այդպիսի հեքիաթներից են Ղազարոս Աղայանի «Արեգնազանը», Հովհաննես Թումանյանի «Ոսկու քաղաքը» և այլն:

Ժողովրդական հեքիաթներում ընդգծված է ժողովրդի միասնության գաղափարը: Բազմաթիվ հեքիաթներ կան, որոնցում դրական հերոսը հաղթանակի է հասնում այլ ազգերի ներկայացուցիչների օժանդակության շնորհիվ:

Ժողովուրդը բանահյուսությունը ստեղծել է `գիտակցելով նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, սերունդների դաստիարակության գործում:

Ժողովուրդը դեմ է եղել շահագործման ամեն մի ձևի և իր բանահյուսության մեջ մերժել է այն հանգամանքները, որոնք իրենց հետ բերել են անհավասարություններ և շահագործում: Ժողովուրդը հավաքելով շահագործող բոլոր ուժերը ստեղծել է մեկ միասնական կերպար՝ չարի կերպարը, հակառակ այդ կերպարին ստեղծվել է նաև բարու կերպարը, որը մարդկային բոլոր դրական գծերի հանրագումարն է: Ժողովուրդը բազմաթիվ հեքիաթներ է հորինել ընտանեկան փոխհարաբերությունների, ծնողների և երեխաների փոխադարձ պարտավորությունների մասին: Սերունդների դաստիարակության գործում ընտանիքը ամենաառաջին օղակն է, որով սկսվում է դաստիարակության ամբողջ շղթան: Հեքիաթում քննադատված են այն ծնողները, որոնք երես են տալիս երեխաներին, կատարում են նրանց բոլոր քմահաճույքները:

Հեքիաթների ուսումնասիրումն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության ընկալում կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ

երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ շատ կարևոր են և անհրաժեշտ նյութի յուրացման և դրանից բխող կրթական և դաստիարակչական նպատակների իրականացման համար:

Տարրական դասարաններում հեքիաթը ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություն: Երբ հեքիաթի բնագիրը բազմակողմանիորեն մշակված ու յուրացված կլինի, այն ժամանակ միայն կարելի է անցնել հեքիաթի երևակայական կողմի բացահայտմանը:

<u>Հեքիաթի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան.</u>

- Նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ
- Հեքիաթի ամբողջական ընթերցում
- Հեքիաթաի ընթերցում մտքում(աշակերտների կողմից)
- Բարձրաձայն ընթերցանություն (կարդում են աշակերտները՝ մեկնաբանություններով)
- Բառային աշխատանք
- Բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով
- Աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման
- Պատմելու նախապատրաստում, պատմում
- Կատարել բարոյախոսական եզրակացություն՝ համապատասխան առած-ասացվածքներ գտնելով և հեքիաթի հետ կապելով
- Ամփոփում

Երեխայի համար հեքիաթը պեսք է կարդալ այնպես, որ նրան հաճույք պատճառի, նա մտովի կարողանա տեսնել այդ պատկերները, հետո միայն կարդալ ու վերլուծել: Լսելուց հետո երեխաներին պետք է հանձնարարել ինքնուրույն վերարտադրել հեքիաթի բովանդակությունը: Շատ օգտակար է հեքիաթի շարունակության հյուսելը, որը նպաստում է խոսքի զարգացմանը:

Աշակերտների՝ հեքիաթի ձևավորման առաջին փուլը ուսուցչի և աշակերտների կողմից կազմված նկարներով պլանի գործածությունն է:

Հեքիաթների ուսումնասիրության մեջ հանձնարարելի են պատմողական և հորինողական ձևերը: Պատմողական ձևով անցնելիս Հեքիաթը չի ընթերցվում այլ պատմվում է ուսուցչի կողմից: Այս դեպքում աշակերտները ոչ միայն

հեշտությամբ են յուրացնում հեքիաթի բովանդակությունը, այլև ընդօրինակում են ուսուցչի պատմելաձևը, տոնայնությունը, շեշտադրումը և ձայնի հնչերանգը: Հեքիաթի դասավանդման այս ձևը հիմնականում կիրառելի է առաջին դասարանում: Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևը ստեղծագործական մեթոդ է և ավելի լավ կիրառություն ունի կրտսեր տարիքի երեխաների ուսուցման գործընթացում, երբ երեխային հնարավորություն է տրվում6 յուրովի վերարտադրել հեքիաթի բովանդակությունը: Երբեմն կարելի է հանձնարարել նույն թեմայով հեքիաթներ հորինել, ինչը զարգացնում է երևակայությունը և մղում ստեղծագործելու: Այսինքն՝ երեխայի մտքերին ազատություն ենք տալիս, թողնելով, որ յուրովի վերարտադրի հեքիաթի բովանդակությունը, ցանկացած փոփոխություններ մտցնի դրանում: Երեխայի երևակայության զարգացման գործում կարևոր է նաև հեքիաթի բեմականացումը, որի ընթացքում երեխան սովորում է ոչ միայն խոսք կառուցել, այլև նոր բարոյական հատկանիշներ է ձեռք բերում: Հեքիաթի իւսումնասիրում կարելի է կատարել նաև խաղային ձևով:

<u>Հեքիթի բեմականացումը</u>

1. Ընտրել այնպիսի հեքիաթ, որի բեմականացմանը կմասնակցի շատ երեխա
2. Կատարել դերերի ճիշտ բաշխումը

Այս ձևը նպաստում է աշխատանքի արդյունավետությանը և միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:

<u>Հեքիաթի հորինում</u>

Երեխաներին հանձնարարվում է անավարտ հեքիաթներ և առաջարկվում է շարունակել, ավարտին հասցնել դրանք: Տրվում է հեքիաթի սկիզբը, իսկ յուրաքանչյուր աշակերտ հեքիաթի շուրջ հորինում է մի քանի նախադասություն:

Հեքիաթի ուսուցման հիմնական խնդիրներն են

- Հեքիաթի դերի և նշանակության ճանաչում
- Սովորողների բարոյական որակների ձևավորում

Ուսուցման գործընթացի ուղղվածությունը

- ☐ մտագրոհ

- ☐ Հեքիաթ բառերով
- ☐ Հեքիաթի լուռ և բարձրաձայն ընթերցում
- ☐ Բնագրային աշխատանք՝ բառերի բացատրություն
- ☐ Ամփոփ հատվածների առանձնացնում և վերնագրում
- ☐ Բովանդակության վերարտադրում
- ☐ Կերպարների բնութագրում
- ☐ Եզրահանգում

Հեքիաթը երեխայից պահանջում է յուրահատուկ որակներ՝ բառերի զգացողություն, ստեղծագործական մտածողություն, հերոսների վարքի դրդապատճառների ընկալում, ապրումակցում և այլն:

Գեղագիտական դաստիարակության իմաստով հեքիաթի արդյունավետ ուսուցման համար մեծ նշանակություն ունի հեքիաթի պատկերազարդումների դիտումը: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս առավել լավ ներկայացնել հեքիաթը: Համակարգիչների օգնությամբ հնարավոր է հեքիաթի գրքեր ստեղծել: Հեքիաթների, ինչպես առած-ասացվածքների ուսումնասիրումը նպաստում է նաև երեխաների արժեհամակարգի ձևավորմանը՝ հարգել մեծերին, օգնել ծերերին, լինել աշխատասեր և ընկերասեր, սուտ չխոսել, լինել համարձակ և այլն: Նման բովանդակությամբ հեքիաթներից կարելի է առանձնացնել Հովհաննես Թումանյանի «Անբան Հուռին», «Անխելք մարդը», «Սուտասանը», «Խելոքն ու հիմարը» և այլն:

Վերլուծելով և հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ խիստ կարևոր է կրտսեր դպրոցում հեքիաթի ուսուցումը այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստի նրան հասու են բոլոր հեքիաթային գանձերը: Երեխան հավատում է հրաշքներին:

Հեքիաթի միջոցով ոչ միայն կարելի է ձևավորվել ու զարգացնել երեխայի երևակայությունը, այլև օգնել հատուկ կարիքներով երեխաների հարաբերությունների կարգավորմանը: Այսպիսի երեխաներին օգնելու մեթոդներից մեկն էլ հեքիաթաբուժությունն է:

Հեքիաթաբուժությունը փոխըմբռնման միջոց է դառնում մարդկանց միջև, թույլ է տալիս զարգացնել ինքնագիտակցությունը, երևակայական մտածողությունը, օգնում է երեխային ճանաչել աշխարհը:

Հեքիաթաբուժությանը նպաստում է հեքիաթի հիմքում ընկած այլաբանությունը, որն իրական աշխարհի և առաջին հերթին երեխայի չբացահայտված ներքին աշխարհի համար կախարդական հայելի է: Հեքիաթաբուժությամբ զբաղվողները պարզել են, որ հեքիաթներ լսելիս երեխաները իրենց պատկերացնում են հեքիաթային հերոսների փոխարեն և աստիճանաբար սկսում են հասկանալ՝ ինչ է նշանակում բարի: Զարգանում է նրանց երևակայությունը: Սա բացատրվում է նրանով, որ բոլոր հեքիաթների վերջում չարը միշտ պատժվում է: Ուժեղ և քաջ մարտիկների, բարի փերիների կերպարները, որոնք դժվար պահերին միշտ հասնում են օգնության հենց բարին են: Սա երեխայի կողմից ավելի հեշտ է ընկալվում քան բարին հերոսների կատարած գործերով ներկայացնելը: Հեքիաթաբուժությունը կիրառվում է ագրեսիվ, վախկոտ, բարդություններ և այլ խնդիրներ ունեցող, անհանգիստ երեխաների հետ աշխատանքի ժամանակ: Հեքիաթները ունակ են վերացնելու երեխայի հոգու խառնաշփոթությունը: Հեքիաթում հնարավոր է այն ամենը, ինչը իրական կյանքում հնարավոր չէ: Հենց այս հանգամանքն էլ երեխային հնարավորություն է տալիս հասկանալու, ընդունելու սեփական անձն ու շրջապատող աշխարհը: Հեքիաթները նպաստում են ոչ միայն երեխայի լեզվական, հաղորդակցական, ստեղծագործական և տրամաբանական կարողությունների, այլև սոցիալական հմտությունների զարգացմանը:

Տարրական դպրոցում հեքիաթի վրա աշխատելու մեթոդական մոտեցումը

Մարդը ՝ սկզբում փոքր, հետո՝ մեծ, միայն այն ժամանակ է ամուր կանգնում իր ոտքերի վրա, երբ զգում և հասկանում է իր հայրենի հողը, նրա ավանդույթներն ու պատմությունը: Եվ այս ամենը զգալու և հասկանալու համար պետք է սկսել վաղ մանկությունից՝ հեքիաթի հետ ծանոթանալու միջոցով: Մանկության տարիներին յուրաքանչյուր երեխա ցանկանում է ընդօրինակել մեծերին, լինել ուժեղ, համարձակ և խելացի: Իսկ Հեքիաթում նա կարծես թե գիտակցում է իր անգիտակից ցանկությունները: Հեքիաթային աշխարհում իրականանում են նրա մեծ ու փոքր երազանքները: Հեքիաթը սովորեցնում է բարություն և արդարություն: Հեքիաթը երեխայի համար դաստիարակչական և

ճանաչողական մեծ արժեք ունի:Սա շատ երեխաների սիրելի ժանրն է: Եվ պատահական չէ, որ տարրական դասարանների ուսումնական ծրագրերում ներառված են տարբեր հեքիաթներ:

Առաջին դասարանում սովորողները ծանոթանում են կենդանիների մասին հեքիաթներին: Երկրորդ դասարանում արդեն ուսումնասիրվում են ժողովրդական հեքիաթներ:

Հեքիաթի վրա կատարվող աշխատանքները

1. Նախապատրաստական զրույց(ինչ է հեքիաթը, ինչ հեքիաթներ է կարդացել երեխան)
2. Նախքան հեքիաթներ կարդալը խորհուրդ է տրվում ուսումնասիրել կենդանիների վարքը ցույց տալ նրանց նկարագարդումները:
3. Հեքիաթը սովորաբար կարդում է ուսուցիչը, բայց ցանկալի է պատմել:
4. Հեքիաթը կարելի է օգտագործել բնութագրեր և գնահատականներ կազմելու համար, քանի որ հեքիաթի հերոսները ունեն բնութագրական հատկանիշներ:
5. Ժողովրդական հեքիաթի առանձնահատկություններից է այն ստեղծվել է բերնից բերան պատմվելու համար: Պատմությունը պետք է արտահայտիչ լինի, որի լավ միջոցը դեմքերով հեքիաթ կարդալն է: Հեքիաթային բեմադրությունը դասից դուրս օգնում է արտահայտել հեքիաթային կերպարը, զարգացնում է երեխաների խոսքն ու ստեղծագործական կարողությունը:
6. Հեքիաթը օգտագործվում է պլաններ կազմելու ուսուցողական աշխատանքի համար:
7. Եթե բնության մասին հեքիաթ է կարդացվում երեխաների մոտ, ապա օգտագործվում է էքսկուրսիայի նյութը, դիտարկումներն ու փորձը: Հեքիաթի ընթերցման հետ կապված հնարավոր է պատրաստել տիկնիկներ, կենդանիների արձանիկներ:

Հեքիաթներ կարդալիս օգտագործում են աշխատանքի հետևյալ տեսակները՝

- պատրաստում հեքիաթի ընկալմանը
- Հեքիաթի ընթերցում
- Կարծիքների փոխանակում կարդացածի վերաբերյալ
- Հեքիաթի մասերի ընթերցում և դրանց վերլուծություն:
- Պատմության պատրաստում

- Ամփոփիչ զրույց
- Տնային առաջադրանքի հանձնարարում

Այսպիսով գրական հիմունքների իմացությունը օգնում է ուսուցչին ավելի լավ հասկանալ հեքիաթի դերը, ընտրել այնպիսի մեթոդներ և տեխնիկա, որոնք համապատասխանում են հեքիաթի այս տեսակին և նպաստում են վերլուծական անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը: Հմտությունները հնարավորություն են տալիս երեխաների ընկալման մեջ անհրաժեշտ հուզական երանգ ստեղծելու համար, նրանց մոտեցնելու, որ միանման հեքիաթներ չկա, յուրաքանչյուր հեքիաթ յուրովի հետաքրքիր է:

Առօրյա հեքիաթներում խոսում են մարդկանց բնավորության, կենդանիների սովորությունների մասին: Այս հեքիաթները վերլուծելիս չպետք է համեմատել մարդկանց կերպարները: Սոցիալական հեքիաթները ցույց են տալիս ժողովի կյանքը, նրա վիշտը, զրկանքները, աղքատությունը, իրավունքների բացակայությունը: Հեքիաթները ցույց են տալիս ժողովրդի երազանքը, հնարամտությունը, տաղանդը, հմտությունը, աշխատասիրությունը: Ուսուցման պրակտիկայում հեքիաթների ընթերցումը հաճախ միաչափ է՝ առանց հաշվի առնելու ժանրային առանձնահատկությունները, ինչի արդյունքում երեխաները սովորում են ոչ թե «հեքիաթային աշխարհի» բովանդակության խորությունը փոխաբերական բնույթը, ոչ թե դրա մեջ թաքնված բարոյական և սոցիալական իմաստը, այլ միայն սյուժեն, որը հաճախ կապում են իրականության հետ: Հեքիաթներին ծանոթանալուց հետո կարելի է հանձնարարել նկարել հիշարժան դրվագ `տեսնելու համար, թե ինչն է գրավել երեխաների ուշադրությունը:

Հեքիաթի բովանդակությունը վերլուծելու ալգորիթմը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ՝

- Հեքիաթի թեման(օրինակ ` սիրո, կենդանիների մասին և այլն)
- Հերոսների և պատկերների վերլուծություն: Առանձնացվում է հիմնականը և օժանդակը: Հերոսները դասակարգվում են բարու և չարի, օգնողների և խանգարողների:Այս փուլում կարևոր է որոշել հերոսին ու հետ հեղինակը նույնացնում է իրեն:
- Պատմվածքի ընթացքում առաջացող դժվարությունների վերլուծություն, որոնց մեջ հայտնվում են գլխավոր հերոսները: Դրանք կարելի է բաժանել երկու մասի՝ արտաքին և ներքին: Առաջինները հուշում են նպատակին հասնելու անհնարինությունը, խոչընդոտներ, հսկայական

գետեր, խիտ անտառներ, հրեշներ և այլն:Մյուսները թերություններն են՝ վախկոտություն, ագահություն, զայրույթ, ֆիզիկական թուլություն:

- Հեքիաթը վերլուծելիս պետք չէ կենտրոնանալ դրա՝ հորինվածք լինելու վրա, այլապես վերանում է հեքիաթի ողջ հմայքը:
- Հեքիաթի բովանդակությունը մշակելուց, դրա անմիջական վերլուծությունից հետո պետք է կարդալ հեքիաթը ըստ դերերի:Արտահայտիչ ընթերցանությունը, դերերով կարդալը միշտ հաճույք է պատճառում երեխաներին, հեշտացնում է հեքիաթի բնորոշ հատկանիշների յուրացումը՝ խոսակցական լեզուն, կրկնությունները, հատուկ ռիթմերը:
- Հեքիաթն ուսումնասիրելու ամենաապահով միջոցը այն բեմադրելն է:
- Հեքիաթի խոսքը պարզ է, վերապատմումը պետք է մոտ լինի տեքստին: Այն պետք է լինի ըստ նկարազարդումների, ըստ նկարի պլանի, ըստ բանավոր պլանի:

Առաջին և երկրորդ դասարաններում երեխաները ընտրություն են կատարում ազատ և ընտրովի վերապատմման միջև: Երրորդ դասարանում դասապրոցեսը սկսվում է վերապատմումից և պատմվածքից, որոնք պահպանում են տեքստի գեղարվեստական առանձնահատկությունները:

Ցանկալի է սկսել առանձին մասերի վերապատմումով, որպեսզի երեխան կարողանա պահպանել լեզվի բոլոր արտահայտչամիջոցները(համեմատություն, անձնավորում և այլն): Այսպիսով, հեքիաթի հետ աշխատանքը տարբեր ձևեր ունի՝ հեքիաթներ կարդալ, վերապատմել կարդացածը, քննարկել հեքիաթի հերոսների վարքագիծը, հաջողությունների և ձախողման պատճառները, հեքիաթի թատերական ներկայացում, մանկական նկարներից ցուցահանդես:

Տարրական դասարանների կրթական ծրագրում զետեղված հեքիաթների կրթական արժեքը հսկայական է: Դրանք սովորեցնում են համեստություն, անշահախնդրություն, քաղաքավարություն:Երբեմն ծաղրում են արատները, ինչը հանգեցնում է հեքիաթի երգիծական կողմնորոշմանը:

4.Հեքիաթը ընկալելու, հյուսելու, հեքիաթի վրա աշխատելու կարողության ձևավորման գործընթացը

Ավարտելով «հեքիաթ» թեման, աշակերտների կարողությունները ստուգելու նպատակով, կազմակերպեցի հարցում խաղի միջոցով: Պարզելու և վերլուծելու համար, թե ինչքանով են յուրացրել հեքիաթի մասին թեմաները՝առաջադրեցի հետևյալ հարցերը

1. Ինչ հաճախականությամբ եք հեքիաթներ ընթերցում
2. Հեքիաթների մեջ, ո՞ր հերոսներին եք նախապատվություն տալիս, դրական, թե՞ բացասական:
3. Ամենից հաճախ ի՞նչ խորհուրդներ եք քաղում հեքիաթներից:
4. Հեքիաթային հերոսների ո՞ր որակները կցանկանայիր ունենալ:
5. Ո՞րն է քո ամենասիրելի հեքիաթը և ինչո՞ւ:

Խաղը կազմակերպելու համար դասարանը բաժանել խմբերի և տալ վերոնշյալ հարցերը: Երեխաներին տալ ժամանակ, հետո լսել յուրաքանչյուրի պատասխանը: Խմբերի բաժանելու նպատակը՝ յուրաքանչյուր խմբին տալ հետևյալ առաջադրանքը

Ընտրել որևէ հեքիաթ և խմբով, ըստ դերերի, ներկայացնել: Որ խումբն ավելի լավ բեմականացնի հեքիաթը, այն խմբի անդամները կգնահատվեն ըստ չափորոշչային պահանջների:

I խումբ-«Ուս ուսի որ տանք սարեր շուռ կտանք» (հայկական ժողովրդական հեքիաթ)

II խումբ-«Ով աշխատի նա կուտի»

III խումբ-«Ինչպես էր շունը ընկեր որոնում» (չեչենական հեքիաթ)

Խմբային աշխատանքից և հարցերին պատասխանելուց հետո աշակերտները գնահատվեցին հետևյալ չափանիշներով

Բարձր	Գնահատվում են այն դեպքում, երբ հարցերին պատասխանելուց բացի կարողանում են պատմել և ներկայացնել հեքիաթը դերերով:
Միջին	Գնահատվում են այն դեպքում, երբ պատասխանում են հարցերին, սակայն ամբողջովին չեն բեմադրում հեքիաթը
Ցածր	Գնահատվում են այն դեպքում, երբ չեն կարողանում հիմնավոր պատասխանել առնվազն 3 հարցի: Կարողացել են ընտրել հեքիաթը, սակայն չեն բեմականացրել:

Խմբային աշխատանքից հետո պարզ դարձավ, որ աշակերտների մեծ մասը բավականին լավ տեղյակ է հեքիաթի ժանրին: Գիտի տարբեր հեքիաթներ և այդ հեքիաթների մասին որոշ տեղեկություններ: Կարողանում են սկսել և ավարտել հեքիաթը, կարողանում են առանձնացնել դրականը բացասականից, լավը՝ վատից, կարող անում են վերագրել հեքիաթը: ԵՐ ի վերջո հեքիաթից վերցնում են խորհուրդներ, խրատներ ՝ լինել բարի, ազնիվ և օգնել մարդկանց:
Բոլոր երեխաները սիրում են հեքիաթներ լսել և կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմակի արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են դրա ընթերցումն ու դարձնում ցանկալի: Այդ է պատճառը, որ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, միևնույն հեքիաթը կարդում են մի քանի անգամ՝ ամեն անգամ դրանում հայտնաբերելով նորը, ուսանելին ու գրավիչը:ԵՐ քանի որ, դասավանդումն անընդհատ զարգացող գործընթաց է, ուստի մեզանից՝ ուսուցիչներիցս պահանջվում է այնպես անել, որ ժամանակակից դասերը չլինեն միօրինակ: Մեր առաջնահերթ նպատակն է դրանք դարձնել բազմաբնույթ և հետաքրքիր:

Դասապլան

II դասարան

Առարկա-Մայրենի

Դասի թեման-Վ. Սարգսյան «Երեք աղջիկների հեքիաթը»

«Ժողովուրդն իմաստուն է» թեմայի ամփոփման դաս

Մեթոդներ, հնարներ-Մտագրոհներ, խմբային աշխատանք, երկխոսության անցկացում

Օգտագործվող նյութեր և միջոցներ

- Թեմայի ուսումնասիրման ընթացքում հեքիաթի տարբեր պահերը ներկայացնող նկարազարդումներ
- Ուսումնական դասագիրք՝ Մայրենի 2
- Դասարանում պատրաստված «Առածները քանդվել են» վահանակ

Դասի նպատակը -

1. Պատմելու և վերապատմելու կարողությունների զարգացում
2. Համապատասխան խոսքային իրավիճակներում ազատ ինքնարտահայտման կարողությունների զարգացում
3. Մեկնաբանել դարձվածների ուղիղ և փոխաբերական իմաստները
4. Հեքիաթի միջոցով մշակել վարքի չափանիշներ, ձևավորել աշխարհայացք:

Վերջնարդյունքներ-Աշակերտը կարողանում է՝

- Գրագետ խոսքով ներկայացնել հեքիաթը՝ շեշտելով հիմնական գաղափարը:
- Մասնակցել խմբային խոսք ձևավորելու գործընթացին:
- Դրսևորել ապրումակցում դասընկերների նկատմամբ:
- Հավաքել քանդված առակները:
- Կատարել բառային աշխատանք:

Դասի ընթացքը

Սկիզբ-10 րոպե

- Ծանոթացում դասի նպատակներին և վերջնարդյունքներին
- Խմբային աշխատանքների նախապատրաստում
- Գրատախտակին ամրացված է վահանակ՝ «Առածները քանդվել են»: Պետք է կատարել առաջադրանքը՝ հավաքել առածները:
- Գրատախտակին առկա է ինքնագնահատման սանդղակը

  Խթանման փուլում - աշակերտների ուշադրությունը կենտրոնացվում է ժողովրդական բանահյուսության վրա, հեքիաթ, առակ, առած, էպոս, ասացվածք, շուտասելուկ, սուտասելուկ, հանելուկ, խաղիկ, տաղիկ, երգեր, պարերգեր և այլն:

  Իմաստի ընկալման փուլ

  Իմաստավորում-25 րոպե

  - ☐ Տեքստը բաժանել մասերի, պլանավորել խաղը, կարևորել գրագետ խոսքը:
  - ☐ Քարտերի օգնությամբ դասարանը բաժանել 4 խմբի: Կատարել խմբային աշխատանք:
  - ☐ Օգնել խմբերին կատարել գրագետ եզրահանգումներ:
  - ☐ Խմբերի ավագները հերթով ներկայացնում են հեքիաթի մասերը և ժողովրդական ստեղծագործությունները:

I խումբ - իրենց ստեղծած հանելուկների ներկայացում

II խումբ - դարձված, առած, խաղիկ-տաղիկ

III խումբ - սուտասելուկ, շուտասելուկ, օրորոցային

IV խումբ - դերային խաղով ներկայացնում է նազիրի և թագավորի երկխոսությունը, իսկ ժողովրդական ստեղծագործություններից՝ զվարճալի խնդուկ և հանելուկ:

- ☐ Խմբերը կատարում են առաջադրանքը՝ հավաքել քանդված առածները :
- ☐ Մեկ անգամ ևս անդրադառնում ենք վերջնարդյունքներին և բացատրում գնահատման սկզբունքները, գրատախտակին առկա սանդղակով:

Կշռադատման փուլ

Ամրապնդում և ամփոփում - 10 րոպե

- Օգտագործում ենք մտագրոհի մեթոդը

- Կատարում ենք բառային աշխատանք
- Երեխաները հեքիաթից դուրս են բերում ո՞վ-ովքե՞ր, ի՞նչ-ինչե՞ր հարցերին պատասխանող բառեր:
- Հեքիաթ բառով կազմում են բառակապակցություններ:
- Ուսուցչի օգնությամբ կատարվում է ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

<u>Հարցեր</u>

1. Ի՞նչ է հեքիաթը:
2. Ինչպե՞ս են սկսվում հեքիաթները:
3. Ո՞ր Հեքիաթը սովորեցիք:
4. Ո՞վ է գրել այդ հեքիաթը:
5. Ի՞նչ են սովորեցնում հեքիաթները:
6. Թվարկեք ձեր իմացած հեքիաթները:
7. Սովորաբար ինչպե՞ս են ավարտվում ժողովրդական հեքիաթները:
8. Ի՞նչ է պարզվում հեքիաթի վերջում:
9. Ի՞նչ եզրահանգման եկաք:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները

- Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի հետաքրքիր լինի, պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի միջոցով:
- Սովորողներին պետք է հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ: Կարդացած հեքիաթները իրենց բառերով կարողանալ վերարտադրել, տարբերել հեքիաթի տեսակները, հասկանալ հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, վերլուծել, հայտնել կարծիքներ հեքիաթի հերոսների մասին, տարբերել Հեքիաթում իրականն ու անիրականը:
- Հեքիաթի հետ տարվող աշխատանքների ընթացքում պետք է կարևորել հերոսների այն հատկանիշները , որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը:
- Կարդացած հեքիաթները վերարտադրելու ընթացքում պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան իրենց լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը:
- Կարծում եմ, որ աշակերտները հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն, մասնակցեն հեքիաթների բեմականացման միջոցառումներին, իրենք էլ լինեն մասնակից, խաղան հեքիաթային հերոսների դերեր, որի շնորհիվ ավելի կտպավորվի հեքիաթի գաղափարը:
- Ուսուցիչը կիրառելով փոխներգործուն մեթոդներ, հնարավորություն կստեղծի աշակերտների մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման համար, դասը ավելի հետաքրքիր կանցկացնի, ինչը շատ կարևոր է:
- Կարևոր է հեքիաթի բովանդակությունը մշակելուց, դրա անմիջական վերլուծությունից հետո, հեքիաթը կարդալ դերերով:Սա երեխաներին

միշտ հաճույք է պատճառում, հեշտացնում է հեքիաթի բնորոշ հատկանիշների յուրացումը ՝ խոսակցական լեզուն, կրկնությունները :

- Օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին:

Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն, ուստի պետք է հպարտ լինի, որ կարող է կրթել ու դաստիարակել բարի, մտածող, գործուն, աշխատասեր, ազնիվ, սեփական մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ ու անկաշկանդ արտահայտող անհատներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գյուլամիրյան Ջ.** «Հայոց լեզու տարրական ուսուցման մեթոդիկա» «Զանգակ-97» հրատ.,2006
2. **Ղանալանյան Ա.** «Հայ ժողովրդական բանահյուսություն», Ե., 1945
3. **Տեր-Գրիգորյան Ա. Ե.** «Հայոց լեզվի մեթոդիկա», Երևան 1980
4. **Սարգսյան Վ. և ուրիշներ** «Մայրենի 2-4»,«Մարմար»,Երևան 2013
5. **Խարազյան Ռ.** «Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա», Երևան 2016
6. **Հարությունյան Վասիլ** «Հեքիաթների դաստիարակության դերը»
7. **Խ. Վաչիկով** «Հեքիաթաբուժություն, ինքնագիտակցության զարգացումը հեքիաթի միջոցով»
8. **Հարությունյան Ս.** «Բնագիտական ակունքներ», Ե., 2014
9. **Թորոսյան Կ.** ուսուցման մեթոդիկա «Նախաշավիղ», Երևան 2018